

Պահպանուել են հռոմէական ոսկէ ու արծաթէ դրամական միաւորներ՝ դրուագուած Հռոմում, մ.թ.ա. I դ. 20–18 թուերին, որոնց վրայ Օգոստոս Օկտավիանոսի դիմաքանդակից բացի, վերացական հասկացողութիւններով, այլաբանօրէն պատկերուած են տեսարաններ Հայաստանի դէմ ունեցած հռոմէական «յաղթանակները», ըստ որում այդ յաղթանակների նշանակութիւնը ներկայացուած է Հռոմի տէրերի գնահատութեամբ: Այսպէս օրինակ, ոսկէ դրամի վրայ պատկերուած է Վիկտորիան (Հռոմի յաղթութեան թեւաւոր դիցուհին), որ վերելից բռնել է հուժկու ցուլի պոզերից եւ ձգտում է տապալել նրան: Տուեալ պատկերին կից գրուած է, վերեւում՝ ARMENIA, իսկ ներքեւում՝ CAPTA, ասել է թէ՛ «Հայաստանը նուաճուած»: Իրամը տեսնողը, լինէր դա վաճառական կամ զինուորական, կամ ընդհանրապէս գրագետ մէկը, ուղղակիօրէն կարող էր հասկանալ, որ Հայաստանը եղել է այն հուժկու ցուլը, որին Հռոմ ձգտում էր պարտել: Բացայայտ հռոմէական գնահատութեան տարբեր պատկերներով, այդ նոյն տարիներին (մ.թ.ա. 20–18 թթ.), դրուագուել են նաեւ արծաթէ դրամներ, որոնց վրայ նոյնպէս արձանագրուել է ARMENIA անունը եւ միշտ Հռոմին որպէս յաղթողի ներկայացնելու պատրանքով: Հայ ուղղակի պատկերում էր ձեռքերն իրանին կապած, զինաթափ կամ ծնկաչոք, ազատութիւն աղբրելու տեսքով: Այդօրինակ դրամները հաւաքուել են եւ ներկայումս առանձին օրինակներով պահուում են թանգարանների դրամագիտութեան բաժիններում:

Յիշատակային նշանակութիւն ունեցող դրամների թողարկումը Հռոմի Կայսրութեան կողմից յետագայում շարունակուեց եւ Հայաստանի անունով դրամների վրայ դրսեւորուեց ARMENIAC տիտղոսաձեւը, որով ազգարարուում է կայսեր յաղթութեան մասին: Յայտնի են Ներոնի օրօք (54–68) թողարկուած արծաթէ երկդրամեանները, դրամեանները, կէսդրամեանները, որոնց բոլորի վրայ էլ կենտրոնում, կայսեր դիմաքանդակի հակառակ դիտում է Վիկտորիայի կերպարանքը, իսկ սրան կից նշուած՝ ARMENIAC բառը: Այսինքն գտնուել էր կայսրութեան գլխաւոր միտքը հաղորդելու լակոնական ձեւը, որի հիմքում ընկած էր ARMENIA երկրի անունը: Հայաստանը Ներոնի կողմից նուաճուած: Այս էր նշանակում տուեալ՝ ARMENIAC տիտղոսաձեւով եւ Ներոնի պատկերով թողարկումը:

Անցնում են տարիներ, Հռոմէական Կայսրութեան արեւելեան շրջաններում, 115 թ. թողարկում են Տրայանոսի պատկերով շքադրամներ, որոնց վրայ արձանագրուած է Հայաստանի անունը, բայց այս անգամ յունարէն՝ ARMENIA ձեւով: Այդ դրամների վրայ Տրայանոս ներկայացուում է ուղղակի յաղթական տեսքով, իւր կայսրական տիտղոսների համառօտագրութիւններով, իսկ Հայաստան՝ անձնաւորուած՝ կնոջ կերպարանքով: Իրանցից բացի, աւելի շատ յայտնի են նաեւ Տրայանոսի պատկերով պղնձէ շքադրամներ, թողարկուած 116–117 թթ., որոնց վրայ Հայաստանի անունը գրուած է լատիներէն ARMENIA, ըստ որում նուաճուած հայոց երկիրը պատկերուած էր երկու գետերի (Տիգրիս եւ Եփրատ) միջեւ, գլխիկոր նստած կնոջ կերպարանքով: Այդ կարգի դրամները դրուագուել էին Տրայանոսի զօրքերի կողմից Հայաստանի եւ Միջագետքի նուաճման առթիւ:

Հայ-հռոմէական յարաբերութիւնների առնչութեամբ Հայաստանի անունը յիշատակուում է այնուհետեւ Անտոնինոս Պիոսի (138–161) պատկերով դրամների վրայ, մասնաւորապէս 140 թ., երբ հռոմի կայսրը հայոց վրայ թագաւոր է կարգում Արշակունի Սոյեմոսին: Իրամի վրայ պատկերուած է թագադրութեան տեսարանը՝ Հռոմի կայսրը պսակ է դնում հայոց թագաւորի գլխին, իսկ շուրջը լատիներէն գրուած՝ REX.ARMENIIS DATVS, այսինքն «հայերին թագաւոր տրուած»:

Իրար եւ անցնում, փոխում են ժամանակները, փոխում են իրադրութիւնները եւ նորից դրամների վրայ արձանագրուում է Հայաստանի անունը, սակայն այս անգամ ոչ թէ յունարէն կամ լատիներէն, այլ պահլաւերէն՝ կապուած Սասանեան Իրանի պատմութեան հետ: Պահպանուել են սասանեան Պերոզ (457–483), Վաղարշ (484–488), Կաւատ (488–497) եւ (499–532), Խոսրով I (531–579), Որմիզդ IV (579–590), ինչպէս նաեւ Խոսրով II (590–627) ու Արտաշէր III (628–630) արքաների պատկերներով արծաթէ դրամներ, որոնց վրայ պահլաւերէն տառերով կրճատ ձեւով յիշատակուած է Հայաստան անունը՝ Խ Զասալ : Իրանց տիպային մանրա-

րի օրօք եւս յիշատակուել է Հայաստանի անունը, ըստ որում ոչ թէ ուղղաւորապէս իրադրութիւնների կապուած, ինչպէս արեւում էր հռոմէական ժամանակներում, այլ որպէս կանոն իբրեւ այն երկրի անունը, որտեղ կատարուել է տուեալ դրամական միաւորների դրուագումը: Այդպէս էր Սասանեան տիրակալութեան ենթակայ բոլոր երկրներում եւ այդ իրողութիւնը V դ. կէսից մշտապէս գտել էր իր արտայայտութիւնը Հայաստանում թողարկուող դրամների պատկերագրութեան մէջ: Շուրջ 150 տարի Իրանի սասանեան արքաները Հայաստանի անունով դրամներ են թողարկել եւ դրանք անցնելով շրջանառութեան մէջ ամենուրեք ներկայացնում էին որպէս Իրանի սասանեան դրամներ՝ Հայաստանում: Հարկ է նկատել, որ Հայաստանում սասանեան դրամների թողարկման գլխաւոր կեդրոնը եղել է Իուհին քաղաքը: Վերջինս հանդիսացել է հայոց երկրի քաղաքական, տնտեսական եւ հոգեւոր մշակոյթի մայրաքաղաքը, ուր դեռեւս IV դ. կէսից Արշակունի թագաւորների արքունական պալատներն էին, իսկ յետագայում սասանեան փոխարքաններն (մարզպաններն) էին այդտեղ ապրում:

VII դ. վերջից, երբ քաղաքական պատմութեան ասպարէզից վերացել էին Սասանեանները, Հայաստանի անունը դրամների վրայ արձանագրելու սովորութիւնը դարձաւ առաւել կայուն արաբական տիրակալութեան ժամանակներում: Նոյն փողերանոցները, որոնք գործում էին Սասանեանների օրօք, շարունակեցին թողարկել արաբական դրամներ, որոնց վրայ այս անգամ արդէն լրիւ ձեւով, արաբերէն թուֆի գրելաձեւով բառացիօրէն գրուում էր, որ այն, այսինքն դրամը, լինէր դա պղնձից, արծաթից, թէ ոսկուց, դրուագուել է Հայաստանում (*أرمينية*): Այդպէս էր դրուածքը ոչ միայն Հայաստանի, այլեւ բոլոր այն երկրների համար, որոնք նուաճուել էին Արաբական Խալիֆայութեան կողմից:

Պահպանուել են Հայաստանի անունը կրող բազմաթիւ դրամներ, որոնք վերաբերում են Օմայանների իշխանութեան տարիներէն (VII դ. առաջին կէսին): Մեզ յայտնի են Հայաստանի արաբական անուանումը կրող (*أرمينية*) հիջրայի 81-ից մինչեւ 109 տարեթուերով, այսինքն մ.թ. 700 թուից մինչեւ 728 թ. գրեթէ անընդմէջ թողարկուած արծաթէ դրամներ (դիրհեմներ), որոնք բոլորն էլ վկայում են այդ մասին:

Հետագայում՝ Օմայանների տապալումից յետոյ, երբ Արաբական Խալիֆայութիւնը բաժնուեց երկու իրարից անկախ արեւելեան եւ արեւմտեան մասերի, ապա արեւելեան մասում, ուր հաստատուել էին Աբբասեանները, Հայաստանի անուան յիշատակութիւնը, շարունակուեց արաբեան դրամների վրայ: Պահպանուած օրինակներից երեւում է, որ թողարկման ընթացքը տեւել է մօտ 200 տարի, հիջրայի 149 թուից մինչեւ 332 թ., այսինքն VIII դ. 60-ական թուականներից մինչեւ X դ. 40-ական թուականները: Եւ այդպէս միշտ որպէս կանոն՝ արաբեան դրամների վրայ յիշատակուում էր Հայաստանի անունն Արմինիյա (*أرمينية*) ձեւով: Քննութիւնները պարզել են, որ դրամները դրուագուում էին Հայաստանի այդ ժամանակներում առեւտրի ու արհեստագործութեան ամենախոշոր կենդրոնը հանդիսացող Իուհին քաղաքում: Արաբական աղբիւրներում այն յայտնի էր Իերիլ կամ Իարիլ անունով: Սակայն բուն քաղաքի անուան արաբական ձեւով (*ديبل*) դրամներ շատ քիչ են պահպանուել: Աբբասեանների օրօք Իուհինում գործող փողերանոցը թողարկել է դրամներ առաւելապէս ողջ երկրի՝ Հայաստանի (*أرمينية*) անունով, չնայած երկրի առանձին քաղաքների անուններով եւս դրամներ դրուագուում էին: Հարկ է նկատել ունենալ նաեւ, որ Արաբական տիրակալութեան ժամանակներում Հայաստանի մէջ վերջականօրէն մտնում էին ողջ Աղուանքը եւ Վրաստանի արեւելեան մասը: Հայաստանում դրուագուած արաբեան դրամները նախատեսուած էին սպասարկելու նախ եւ առաջ ապրանքափոխանակութեան հայկական եւ նրանց հետ կապուած հայաշատ քաղաքների արտաքին ու ներքին առեւտրի պահանջները:

Արեւելեան Խալիֆայութեան անկման շրջանում, երբ նրա լայնածաւալ տարածքի վրայ առաջացել էին արաբեաններից կիտանկախ ու անկախ ամիրայութիւններ, վերջիններս նուաճել էին սեփական դրամ կտրելու իրաւունքը եւ ներքին ու արտաքին առեւտրի համար թողարկում էին իրենց (արծաթէ, պղնձէ, երբեմն ոսկէ) դրամական միաւորները: Հայաստանում այդպիսիներից էին Սաջեան ամիրաները: Մահմեդական դաւանանքի Սաջեան ամիրաները՝ տիրելով Քուր-Արաբս

Իսկ ո՞վքեր էին յետսելջուկեան շրջանի այն տիրակալութիւնները, որոնք իրենց դրամները վրայ դրոշմում էին Հայաստանի անունը (*دینار*) ձեւով: Ինչպէս վկայում են գտնուած դրամները, դրանք Մերձաւոր Արեւելքում, երբեմնի հզօր, մոնղոլական ծագում ունեցող երկու դինաստիաների առանձին խաներն էին, որոնց հրամանով դրուագուած դրամները վրայ յիշատակուած է Հայաստանի անունը: Ժամանակագրական կարգով այդ անունը առաջինը դիտուում է Հուլաղուեան Ղազան Մահմուդ խանի օրօք (1295–1304) թողարկուած բացառապէս արաբերէն գրութիւններով արծաթէ դրամները վրայ, ըստ տարեթուի դրանք շրջանառութեան մէջ մտել են հիշրայի 700, այսինքն մ.թ. 1300–1301 թթ. կամ այլ կերպ ասած XIV դ. սկզբին: Տասը տարի անց, Ղազան Մահմուդի յաջորդը՝ Հուլաղուեան Մուհամմեդ Խուզաբանդա Օլջեյտու խանի օրօք (1304–1316) եւս թողարկուում են Հայաստանի (*دینار*) անունը կրող արծաթէ երկդրամեաններ, որոնց վրայ պահպանուել է ինչպէս նրանց դրուագման տարեթիւը՝ հիշրայի 710, այսինքն մ.թ. 1310–1311 թթ., այնպէս էլ իրեն՝ Օլջեյտու խանի անունը:

Շուրջ եօթնասուն տարի անց, երբ Իրանում պատմութեան ասպարէզ էին մտել Հուլաղուեաններին յաջորդած Ջալաիրեանները (1336–1432), նորից դրամների վրայ արտացոլուում է Հայաստանի անունը, ըստ որում նոյն արաբերէն Արմինիյա (*آرمينية*) ձեւով: Այս անգամ այն դրոշմուած է Ջալաիրեան Ղիյաս ադ-Դին Ահմեդ խանի (1382–1385) արծաթէ դրամի վրայ: Ծարաբախտաբար դրամի վրայ նշուած նրա դրուագման տարեթիւը ջնջուած է: Ըստ էութեան Ջալաիրեան յիշալ դիրհամը հանդիսանում է վերջին վկայութիւնը Հայաստանի անուան XIV դ. դրամների շարքից, որոնք վերաբերում են զարգացած միջնադարի պատմութեան:

Յետագայում Հայաստանի անունը դրամների վրայ գրեթէ չի յիշատակուում, եթէ զանց առնենք Բրիտանական թանգարանում պահուող օսմանեան դրամների շարքում մի հազուագիւտ օրինակ, որի վրայ դրոշմուած գրութիւնների մասին կ'անդրադառնանք առանձին:

Ամփոփելով վերոյիշեալ տուեալները, կարող ենք նշել, որ Հայաստանի անունը դրամների վրայ արձանագրուել է բացառապէս օտար պետութիւնների կողմից՝ մ.թ.ա. I դ. 30-ական թուականների սկիզբից մինչեւ զարգացած միջնադարի վերջին տարիները (1382–1385 թթ.): Աւելի քան 1400 տարի ընդգրկող այդ ժամանակաշրջանի վերաբերեալ դրամները յիշատակում են Հայաստանի պատմութեան այն էտապները, որոնք կապուած են եղել Հռոմի կայսրութեան, Սասանեան Իրանի, Արաբական Ուլաիֆայութեան (Օմայան եւ Աբբասեան դինաստիաների), Սաջեան, Բուվեհեան ամիրանների, Հուլաղուեան խաների, ինչպէս նաեւ հուլաղուեանների յաջորդած Ջալաիրեանների հետ:

Հայաստանի անունը դրամների վրայ յիշատակուել է լատիներէն, շատ քիչ յունարէն, պահլաւերէն եւ առաւելապէս արաբերէն լրիւ կամ կրճատ արձանագրութիւններով:

Հռոմէական ժամանակներից առաւել նկատելի են եղել նախ վաղ կայսրական (Օգոստոս Օկտավիանոս, Ներոն) եւ այնուհետեւ II դ. (Տրայանոս, Ա. Պիոս, Լ. Վերոս, Մ. Աւրելիոս) ոսկէ, արծաթէ ու պղնձէ դրամները՝ թողարկուած հայհոմէական առանձին ռազմաքաղաքական իրադարձութիւնների առթիւ: Հայաստանի անունը կրող հռոմէական ծագում ունեցող դրամները Հայաստանում չեն թողարկուել եւ հայկական շուկաներում լայն տարածում չեն ունեցել: Դրանք թողարկուել են առաւելապէս կայսրութեան մայրաքաղաքում Հռոմում եւ մետրոպոլիայի սահմաններից շատ հեռու չեն անցել:

V դ. վերջից, Իրանի Սասանեան արքաները, որոնց տիրակալութեան տակ էր գտնուում Հայկական լեռնաշխարհի արեւելեան մասը, Հայաստանում, մասնաւորապէս նրա գլխաւոր քաղաք՝ Դուրնում, թողարկուել են արծաթէ դրամներ: Վերջիններիս վրայ, միշտ որպէս կանոն, նշուել է Հայաստանի անունը պահլաւերէն համառօտագրութիւններով: Երկրի անուան այդ ձեւը դիտուում է Սասանեան եօթ արքաների (Պերոզ, Վաղարշ, Կաւատ, Խոսրով I, Որմիզդ IV., Խոսրով II եւ Արտաշիր III) գահակալութիւնների տարիներին թողարկուած արծաթէ դրամների (դրախմների) վրայ: Լինելով բարձր որակի արծաթից սասանեան այդ դրամները գործառական նշանակութիւն են ունեցել միջազգային առեւտրի ոլորտում, ըստ որում Հայաստանի ապրանքափոխանակութիւնը V–VII դդ. զարգացել է Իրանի արտաքին ու ներքին առեւտրի հետ կապուած:

Այնուհետեւ Հայաստանի անունը դրոշմուել է Արաբական Ուլաիֆայութեան ժամանակներում թողարկուած դրամական միաւորների վրայ: Այդ են վկայում VIII դ. առաջին կեսին, օմայան հարստութեան Աբդ ալ-Մելիք, Վալիդ Ա. Սուլեյման, Աբդ ալ-Ազիզ, Յագիդ Բ եւ Հիշամ խալիֆաների տարիներին Հայաստանում դրուագուած արծաթէ ու մասամբ պղնձէ դրամները:

Յետագայում Հայաստանի անունը մահմեդական դրամների վրայ նշուել սկզբունքը, որպէս մշտական կանոն, դիտուում է առաւել զանգուածօրէն թողարկուող Արաբական Ուլաիֆայութեան ալ-Մանսուր, ալ-Մահդի, ալ-Հադի, Հարուն ալ-Ռաշիդ, ալ-Ամին, ալ-Մամուն, ալ-Մուտաւաքիլ, ալ-Մուստայիւն, ալ-Մուստազ, ալ-Մուհամադի, ալ-Մուստամիդ, ալ-Մուստադիդ, ալ-Մուկտաֆի, ալ-Մուքտադիր եւ ալ-Մուստաքի խալիֆաների գահակալութեան տարիներին դրուագուած դիրհամների վրայ: Արաբական դրամների շարքից առաւել շատ պահպանուել են Օմայան Վալիդ Ա, Սուլեյման, Յագիդ Բ եւ Հիշամ խալիֆաների օրօք Հայաստանում թողարկուած դիրհամները, իսկ Աբբասեաններից՝ ալ-Մահդի, Հարուն ալ-Ռաշիդ, ալ-Մամուն, ալ-Մուստամիդ եւ ալ-Մուստադիդ խալիֆաների դրամները, որոնց բոլորի վրայ էլ նշուած է Հայաստանի անուան արաբական ձեւը՝ Արմինիյա (*آرمينية*), որպէս այն երկրի անունը, ուր կատարուել է նրանց դրուագումը: Աւանդաբար, հիմք ընդունելով Մահմեդական աշխարհում ընդունուած տեղանուան ձեւը, արդէն յետագայում առանձին ամիրայութիւններ նոյնպէս շարունակում են դրոշմել Հայաստանի անունը, մասնաւորապէս Սաջեանները (Յուսուֆ իբն Դիվլադը) եւ նրանց տիրոջները ժառանգելու պահանջով հանդէս եկած ամիրաններից՝ Դաւաւմ իբն Իբրահիմը, ինչպէս նաեւ Բուվեհեաններից Դուլին ադ-Դաուլա Հասանը եւս Հայաստանում հասած իրենց արծաթէ, երբեմն ոսկէ դրամների վրայ քուֆի գրելաձեւով նշում են հայոց երկրի անուան արաբական ձեւը: Այսպէս VIII դ. սկզբից մինչեւ X դ. 60-ական թուականները, շուրջ 260 տարի, գրեթէ անընդմէջ շրջանառութեան մէջ են մտել դրամներ, որոնց վրայ նշուած արաբերէն արձանագրութիւնների մէջ, եղել է Հայաստանի անունը: Դրուագումը կատարուել է հայոց շահաստան Դուրին քաղաքում, ուր այդ ժամանակներում գործում էր Ուլաիֆայութեան, իսկ նրա փուզումից յետոյ առաջացած ամիրայութիւնների գլխաւոր փողերանոցը (դրամահատարանը):

Աւելի քան երեք հարիւր տարի անց, երբ Մերձաւոր Արեւելքի երկիրները դուրս էին եկել այսպէս կոչուած «Արծաթի ճգնաժամից», մի երեւոյթ, որ դրսեւորուել է սելջուկեան տիրապետութեան XI–XII դդ., դրամական տնտեսութեան մէջ արծաթի սղութեան պատճառով, նորից ծայր է առնում արծաթէ դրամական միաւորների թողարկումը եւ այս անգամ մոնղոլական, ինչպէս նաեւ վերջիններիս անմիջական յաջորդներ՝ Ջալաիրեան խաների կողմից: Հայաստանի անուան յիշատակութիւնը այդ ժամանակներում եւս շարունակում էր կատարուել արաբերէն Արմինիյա ձեւով, բայց ոչ քուֆի այլ նասի գրելաձեւով, որ դարձել էր բնորոշ XI–XIV դդ. մուսուլմանական դրամների վրայ դրոշմուած արձանագրութիւնների համար: Յետագայ դարերում թողարկուած դրամների վրայ Հայաստանի անուան յիշատակութիւնը այլեւս արտացոլում չի ստանում: Քաղաքային զարգացման բերումով հայկական քաղաքներում թողարկուած դրամների վրայ նշում են այդ քաղաքների անունները՝ առանց յիշատակելու երկրի ամբողջական անունը, որ այնքան յաճախ արտացոլում էր սասանեան եւ արաբական դրամական միաւորներով:

Ստորեւ ներկայացնում ենք Հայաստանի անուան ցուցակը ըստ դրամագիտական վկայութիւնների:

Յ Ո Ւ Ց Ա Կ
ԱՅՆ ԴՐԱՄՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՎՐԱՑ ԳՐՈՒԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՈՒՆԸ

1.	2.	3.	4.	5.
1.	Արծաթ, հռոմեական, Մ. Անտոնիոս (43-31) ղենարիուս:	ARMENIA	Մ.թ.ա. 32-31թթ.	ՀՊԹ, No.No. 15143-16116; S, 194, No. 1210
2.	Ոսկի, հռոմեական, Օգոստոս Օկտավիանոս, (Մ.թ.ա. 27-մ.թ. 14թթ.) աուրիուս:	"	Մ.թ.ա. 20-18թթ.	Mattingly, I, 108, No. 671, pl. 16, No. 14.
3.	Արծաթ, հռոմեական, Օգոստոս Օկտավիանոս, (Մ.թ.ա. 27-մ.թ. 14թթ.) ղենարիուս:	"	"	Mattingly, I, 109, No.No. 672-675, pl. 16, No.No. 15-17.
4.	Արծաթ, հռոմեական, Օգոստոս Օկտավիանոս, (Մ.թ.ա. 27-մ.թ. 14թթ.) ղենարիուս:	"	"	Mattingly, I, 8, No. 44, pl. 2, No. 4.
5.	"	ARME.	"	Mattingly, I, 4-8, No.No. 18-21, pl. 1, No.No. 10-12, 43, pl. 2, No. 3.
6.	"	ARMEN	"	Mattingly, I, 109, No.No. 676, 678, pl. 16, No.No. 18, 19.
7.	Արծաթ, հռոմեական, Ներոն (54-68), դիդրակիմ:	ARMENIAC	59թ.	Mattingly, I, 281, No. 405, pl. 40, No. 16.
8.	Պղինձ, հռոմեական, Տրայանոս (98-118), սեստեր:	ARMENIA	115թ.	ՀՊԹ, No.No.22456-22470; Mattingly, III, 221, No.No. 1033-1041.
9.	"	"	116-117թթ.	ՀՊԹ, No. 29990; Mattingly, III, pl. 42, No. 7.
10.	Պղինձ, հռոմեական, Ա. Պիոս (138-161) սեստեր:	ARMENIIS	140թ.	ՀՊԹ, No. 17625/11; DS, 94, No. 1168.
11.	Ոսկի, հռոմեական, Լ. Վերոս (161-169), աուրիուս:	ARMEN. ARMENIACVS	163թ.	Mattingly, IV, pl. 29, No. 2, pl. 57, No. 13.
12.	Ոսկի, հռոմեական, Լ. Վերոս (161-169), աուրիուս:	"	164թ.	Mattingly, IV, pl. 58, No. 11.
13.	Ոսկի, հռոմեական, Լ. Վերոս, (161-169), աուրիուս:	ARM.	168թ.	ԶՊ, 103, No. 50.
14.	Արծաթ, հռոմեական, Լ. Վերոս, (161-169), ղենարիուս:	ARMENIACVS ARMEN.	163թ.	ՀՊԹ, No. 22468, Mattingly, IV, pl. 57, No. 14; ԶՊ, 111, No. 92.
15.	Պղինձ, հռոմեական, Լ. Վերոս, (161-169), սեստեր:	ARMENIACVS	164թ.	Mattingly, IV, pl. 75, No. 12; ԶՊ, 122, No. 170.
16.	Պղինձ, հռոմեական, Լ. Վերոս, (161-169), սեստեր:	ARMENIACVS ARMENIIS	164թ.	ՀՊԹ, No. 12569.
17.	Պղինձ, հռոմեական, Լ. Վերոս, (161-169), դուպոնդիուս:	ARMEN.	164թ.	ՀՊԹ, No. 12572.
18.	Պղինձ, հռոմեական, Լ. Վերոս, (161-169), դուպոնդիուս:	ARM.	166թ.	ՀՊԹ, No. 12571.
19.	"	ARMENIA	164-165թթ.	ԶՊ, 147-150.
20.	Ոսկի, հռոմեական, Մ. Աուրելիոս (161-180), աուրիուս:	ARMEN.	163-164թթ.	Mattingly, IV, ԶՊ, 153, No. 333.
21.	Արծաթ, հռոմեական, Մ. Աուրելիոս (161-180), ղենարիուս:	ARMEN.	164թ.	ՀՊԹ, No. 22462.
22.	Պղինձ, հռոմեական, Մ. Աուրելիոս (161-180), սեստեր:	ARMENIACVS	164թ.	ՀՊԹ, No. 12579.
23.	Պղինձ, հռոմեական, Մ. Աուրելիոս (161-180), Դիպոնդիուս:	ARM.	164թ.	ՀՊԹ No. 12573:
24.	Պղինձ, հռոմեական, Մ. Աուրելիոս (161-180), քվարդանոս:	ARMENIACVS ARMEN.	164թ.	ԶՊ, 187-188, No. 597:
25.	Արծաթ, հռոմեական, Մ. Աուրելիոս (161-180), ղենարիուս:	ARMENIA	164-165թթ.	ԶՊ, 189-190, No.No. 598-600:

1.	2.	3.	4.	5.
26.	Պղինձ, հռոմեական, Մ. Աուրելիոս (161-180), սեստեր:	ARMENIACVS	163-164թթ.	HC, 205, No. 348; ԶՊ, 197, No. 2:
27.	"	ARMENIA	"	ԶՊ, 118, No. 4.
28.	"	"	164-165թթ.	HC, 173, No. 14.
29.	"	"	167-168թթ.	HC, 174, No. 16.
30.	Արծաթ, սասանեան, Պերոզ (457-485), դրակիմ:	س	V դ. 60-ական թուականներ	MM, 147.
31.	Արծաթ, սասանեան, Վաղարշ (484-488), դրակիմ:	"	V դ. 80-ական թուականներ	MM, 147.
32.	Արծաթ, սասանեան, Կալատ (488-532), դրակիմ:	"	V-VI դդ. սահմանին	MM, 147.
33.	Արծաթ, սասանեան, Խոսրով I (531-579), դրակիմ:	"	VI դ.	MM, 148.
34.	Արծաթ, սասանեան, Որմիզ IV (579-590), դրակիմ:	"	VI դ. 80-ական թուականներ	MM, 148.
35.	Արծաթ, սասանեան, Խոսրով II (590-627), դրակիմ:	"	VI դ. վերջին	MM, 148.
36.	Արծաթ, սասանեան, Աբուսիր (628-630), դրակիմ:	"	VII դ.	MM, 149:
37.	Արծաթ, արաբական, Օմայաններ, Աբու ալ-Մեդինե, (685-705), դիրհեմ:	ارمينية	81 (700-701թթ.)	HN, 67, No. 304, tafel, IV.
38.	Արծաթ, արաբական, Օմայաններ, ալ-Վալիդ (705-715), դիրհեմ:	"	92 (710-711թթ.)	T, No. 2725.
39.	"	"	94 (712-713թթ.)	T, No. 401; M, 4, No. 104.
40.	Արծաթ, արաբական, Օմայաններ, ալ-Վալիդ, դիրհեմ:	"	95 (713-714թթ.)	T, No. 424; L, No. 239; HN, No. 347; AZ, No. 49; Զ, No. 71.
41.	"	"	96 (714-715թթ.)	T, No. 439; L, No. 240; HN, No. 348; M, 5, No.No. 135-137.
42.	Արծաթ, արաբական, Օմայաններ, Սուլեյման (715-717), դիրհեմ:	"	97 (715-716թթ.)	T, No. 450; M, 6, No. 140; W, No. 64.
43.	Արծաթ, արաբական, Օմայաններ, Սուլեյման, (715-717), դիրհեմ:	"	98 (716-718թթ.)	T, No. 461; W, No. 66; GE, No. 117; M, 6, No.No. 150-151.
44.	Արծաթ, արաբական, Օմայաններ, Ումայր Իբն Աբու ալ-Ազիզ, (720-724), դիրհեմ:	"	99 (717-718թթ.)	T, No. 472; L, No. 242; W, No. 68; M, 7, No. 62; HN, No. 445.
45.	Արծաթ, արաբական, Օմայաններ, Ումայր Իբն Աբու ալ-Ազիզ, (720-724), դիրհեմ:	"	100 (718-719թթ.)	T, No. 480; BM, I, No. 48; M, 7, No.No.169, 170.
46.	Արծաթ, արաբական, Օմայաններ, Յազիդ, (720-724), դիրհեմ:	"	101 (719-720թթ.)	T, No. 491; W, No. 71; HN, No. 470; M, 7, No.No. 178-181.
47.	"	"	102 (720-721թթ.)	T, No. 499; W, No. 72; HN, No. 482; M, 8, No.No. 185-186.
48.	"	"	103 (721-722թթ.)	T, No. 507; L, No. 246; W, No. 75; HN, No. 483.
49.	"	"	104 (722-723թթ.)	T, No. 513; L, No. 430; W, No. 76; Զ, No. 89/91.
50.	"	"	105 (723-724թթ.)	T, No. 521; M, 8, No. 202.
51.	Արծաթ, արաբական, Օմայաններ, Հիլալ, (724-743), դիրհեմ:	"	106 (724-725թթ.)	T, No. 526.
52.	"	"	107 (725-726թթ.)	T, No. 532; HN, No. 509.

1.	2.	3.	4.	5.
53.	»	ارمينيه	108 (726-727թթ.)	T, No. 536; П, No. 50.
54.	»	»	109 (727-728թթ.)	T, No. 543; L, No. 466.
55.	Պղինձ, արաբական, Օմայան-ներ, (661-750), Ֆելա:	»	անտարբեթիւ.	BM, 180, No. 39; HN, No. 1939; M, 62, No. 1168; ՀՊՔ, No.No. 17674, 17173/8:
56.	»	»	123 (740-741թթ.)	П, 53.
57.	Արծաթ, արաբական, Աբ-բասաններ, ալ-Մանուր (754-775), դիրհամ:	»	143 (760-761թթ.)	T, No. 727; L, No. 611; BM, No. 28; HN, No. 638.
58.	»	»	151 (768թ.)	AZ, No. 248.
59.	Արծաթ, արաբական, Աբ-բասաններ, ալ-Մահդի (775-785), դիրհամ:	»	152 (769թ.)	Յ, No. 592, T, No. 809.
60.	»	»	153 (770թ.)	Յ, No. 122; T, No. 818; GE, No. 311.
61.	»	»	154 (770-771թթ.)	Յ, No. 49; L, No. 614.
62.	»	»	155 (771-772թթ.)	Յ, No.No. 595; T, No. 845; BM, No. 31.
63.	»	»	161 (777-778թթ.)	Յ, No. 156; T, No. 910; HN, No. No. 784, 785; BM, No. 89; L, No. 692.
64.	»	»	162 (778-779թթ.)	Յ, No. 791; t, No. 925; HN, No. 786.
65.	»	»	165 (781-782թթ.)	T, No. 981.
66.	»	»	166 (782-783թթ.)	HN, No. 787; L, No. 693.
67.	»	»	167 (783-784թթ.)	Յ, No. No. 158, 795; M, No. 269; HN, No. 788; T, No. 1027; L, No. 694; BM, No. 91.
68.	Արծաթ, արաբական, Աբ-բասաններ, ալ-Մահդի (775-785), դիրհամ:	»	168 (784-785թթ.)	Յ, No. 276 (1061); T, No.No. 1050, 1051; HN, No.No. 789, 790; BM, No. 92.
69.	Արծաթ, արաբական, Աբ-բասաններ, ալ-Հադի (785-786), դիրհամ:	»	169 (785-786թթ.)	T, No. 1076.
70.	Արծաթ, արաբական, Աբ-բասաններ, Հարուն ալ-Ռաշիդ (786-809), դիրհամ:	»	172 (788-789թթ.)	AZ, No. 420.
71.	»	»	174 (790-791թթ.)	Յ, No. 1117; HN, No. 960.
72.	»	»	175 (791-792թթ.)	T, No. 1197.
73.	»	»	176 (792-793թթ.)	П, II, 88.
74.	Արծաթ, արաբական, Աբ-բասաններ, Հարուն ալ-Ռաշիդ (786-809), դիրհամ:	»	177 (793-794թթ.)	П, II, 88-89.
75.	»	»	179 (795-796թթ.)	Յ, No. 333 (1118); T, No. 1262; П, II, 91.
76.	»	»	180 (796-797թթ.)	Յ, No. 333 (1119); M, No. 423.

1.	2.	3.	4.	5.
77.	»	ارمينيه	181 (797-798թթ.)	Յ, No. 334 (1120); M, 29, No. 439; L, No. 775.
78.	»	»	182 (798-799թթ.)	Յ, No. 335 (1121); M, 30, No.448; T, No. 1332.
79.	»	»	183 (799-800թթ.)	T, No.No. 1345, 1346; П, II, 93.
80.	»	»	185 (801թ.)	Յ, No. 1122 (335a); M, No. 4836; П, II, 95; T, No. 1388.
81.	Արծաթ, արաբական, Աբ-բասաններ, Հարուն ալ-Ռաշիդ (786-809), դիրհամ:	»	186 (802թ.)	T, No.No. 1405, 1406.
82.	»	»	187 (802-803թթ.)	T, No. 1424; Dorn, No. 313; П, II, 99.
83.	»	»	188 (803-804թթ.)	T, No. 1440; П, II, 101.
84.	»	»	189 (804-805թթ.)	HN, No.No.961, 962; П, II, 102.
85.	»	»	190 (805-806թթ.)	T, No. 1482; HN, No. 963.
86.	»	»	191 (806-807թթ.)	T, No. 2816; HN, No. 964; П, II, 106.
87.	»	»	192 (807-808թթ.)	T, No. 1513; Յ, No. 336; M, No. 579.
88.	Արծաթ, արաբական, Աբ-բասաններ, ալ-Ամին (809-813), դիրհամ:	»	193 (808-809թթ.)	T, No. 1543.
89.	»	»	194 (809-810թթ.)	П, II, 109.
90.	»	»	195 (810-811թթ.)	Յ, No. 1631; T, No.No. 1609, 1610; HN, No. 12460; П, II, 109.
91.	Արծաթ, արաբական, Աբ-բասաններ, ալ-Մամուն (813-833), դիրհամ:	»	202 (817-818թթ.)	T, No. 1733; П, II, 114.
92.	»	»	203 (818-819թթ.)	Յ, No.No. 674, 1742; T, No. 2840; GE, No. 564.
93.	Արծաթ, արաբական, Աբ-բասաններ, ալ-Մամուն (813-833), դիրհամ:	»	204 (819-820թթ.)	T, No.No. 1758, 1760; П, II, 115.
94.	»	»	207 (822-823թթ.)	T, No. 1791.
95.	»	»	217 (832թ.)	Յ, No. 675 (1743); M, No. 774a.
96.	»	»	218 (833թ.)	JA, 195; П, II, 127.
97.	Արծաթ, արաբական, Աբ-բասաններ, ալ-Մուսուաբիլ (847-861), դիրհամ:	»	239 (853-854թթ.)	Յ, No.No. 838, 2112.
98.	»	»	243 (857-858թթ.)	Յ, No.No.839, 2113; T, No. 1917.
99.	»	»	246 (860-861թթ.)	Յ, No. 840; HN, No. 1467.
100.	Արծաթ, արաբական, Աբ-բասաններ, ալ-Մուսուաբիլ (847-861), դիրհամ:	»	247 (861-862թթ.)	Յ, No. 840m; T, No. 1934.
101.	Արծաթ, արաբական, Աբ-բասաններ, ալ-Մուսուաբիլ (862-866), դիրհամ:	»	248 (862-863թթ.)	Յ, No. 888; M, 46, No. 826; T, No. 1939.
102.	»	»	249 (863-864թթ.)	Յ, No.No. 888g (2222); T, No. 2863.
103.	»	»	250 (864-865թթ.)	T, No. 1946; M, 46, No. 831.

1.	2.	3.	4.	5.
104.	Արծաթ, արաբական, Աբ-բասեաններ, ալ-Մուտազ (866-869), դիրհեմ:	ارسيه	251 (865թ.)	T, No. 1951.
105.	Արծաթ, արաբական, Աբ-բասեաններ, ալ-Մուտազ (866-869), դիրհեմ:	»	252 (866թ.)	Յ, No. 901 (2255); T, No. 1957.
106.	»	»	253 (867թ.)	Յ, No. 901; T, No. 1962, 1963.
107.	»	»	255 (868-869թթ.)	Յ, No. 901, No. 2259; T, No. 4968.
108.	Արծաթ, արաբական, Աբ-բասեաններ, ալ-Մուհամմադի (869-870), դիրհեմ:	»	256 (869-870թթ.)	Յ, No. 915, 2303; T, No. 1975.
109.	Արծաթ, արաբական, Աբ-բասեաններ, ալ-Մուտամիդ (870-892), դիրհեմ:	»	262 (875-876թթ.)	Յ, No.No. 936, 2310; T, No. 2015.
110.	Արծաթ, արաբական, Աբ-բասեաններ, ալ-Մուտամիդ (870-892), դիրհեմ:	»	263 (876-877թթ.)	T, No. 2019.
111.	»	»	267 (880-881թթ.)	Յ, No.No. 937, 2314; T, No.No. 2041-2043.
112.	»	»	268 (881-882թթ.)	T, No. 2049.
113.	»	»	269 (882-883թթ.)	Յ, No.No. 938, 2312, 2316; T, No. 2052.
114.	»	»	270 (883-884թթ.)	HN, No. 1548.
115.	»	»	276 (889-890թթ.)	Յ, No.No. 939, 2317; BM, I, 368.
116.	»	»	277 (890-891թթ.)	Յ, No.No. 939 (2323); M, No. 876; T, No. 2097; HN, No. 1558.
117.	Արծաթ, արաբական, Աբ-բասեաններ, ալ-Մուտամիդ (870-892), դիրհեմ:	»	279 (892-893թթ.)	T, No. 2120; L, No. 1024; П, II, 147.
118.	Արծաթ, արաբական, Աբ-բասեաններ, ալ-Մուտամիդ (892-902), դիրհեմ:	»	284 (897թ.)	П, II, 148.
119.	»	»	286 (899)	T, No. 2145; HN, No. 1581.
120.	»	»	287 (900թ.)	Յ, No. 2390; T, No. 2149.
121.	»	»	288 (900-901թթ.)	T, No. 2157.
122.	»	»	289 (901-902թթ.)	T, No. 2162.
123.	Արծաթ, արաբական, Աբ-բասեաններ, ալ-Մուկուաֆի (902-908), դիրհեմ:	»	293 (905-906թթ.)	T, No.No. 2193, 2194.
124.	Արծաթ, արաբական, Աբ-բասեաններ, ալ-Մուհամմադի (908-932), դիրհեմ:	»	307 (919-920թթ.)	Յ, No.No. 963a, 1051, 2484.
125.	Արծաթ, արաբական, ալ-Մուտամիդ (940-944), դիրհեմ:	»	331 (942-943թթ.)	T, No. 2933; П, II, 155.
126.	»	»	332	Յ, No. 1083; П, II, 155.
127.	Ոսկի, Սաջեաններ, Եուսուֆ իբն Դիւլադ (901-923), դինար:	»	300 (912-913թթ.)	Յ, No. 815, Փ, No. 15; МИА, No. 32604.
128.	Արծաթ, Սաջեաններ, Եուսուֆ իբն Դիւլադ (901-923), դիրհեմ:	»	301 (913-914թթ.)	Յ, No. 977 (6568).


1.	2.	3.	4.	5.
129.	»	سنيه	302 (914-915թթ.)	W, No. 929.
130.	»	»	315 (927-928թթ.)	Փ, 15, No. 21.
131.	»	»	319 (951թ.)	ՀՊԹ, No. 17372.
132.	Արծաթ, Դայամ իբն Իբրահիմ ալ-Գուրդի (934-953), դիրհեմ:	»	330 (941-942թթ.)	ՅՅ, X, 15-19.
133.	Ոսկի, Բուլեհեան, Բուկն ալ-Դաուլա Հասան (947-977), դինար:	»	350 (961-962թթ.)	Sumer, X, 1954, No. 2, pp. 191-192.
134.	Ոսկի, Բուլեհեան, Բուկն ալ-Դաուլա Հասան (947-977), դինար:	»	351 (962թ.)	Sumer, X, 1954, No. 2, pp. 191-192.
135.	»	»	352 (963թ.)	»
136.	Արծաթ, Հուլադուեան, Ղազան Մահմուդ (1295-1304), դիրհեմ:	»	700 (1300-1301թթ.)	BM, VI, No. 106.
137.	Արծաթ, Հուլադուեան, Օլջեյտու (1304-1316), երկդիրհեմ:	»	710	M, 579, No. 220; Յ, No. 219.
138.	Արծաթ, Ջալալիբեան, Ղլյաս ալ-Դին Ահմեդ խան (1382-1385թթ.) դիրհեմ:	»	Ջնջուած տարեթուով	BM, VI, No. 650, pl. X.

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ԶՊ. – Զարեհ Պտուկեան, Հայաստանի վերաբերեալ հռոմէական դրամներ եւ մեդալիոններ, Վիեննա, 1971 (ազգային Մատենադարան, հատոր ՄԺԵ):
- ԽՄ. – Խաչատուր Մուշեղեան, Դրամական շրջանառութիւնը Հայաստանում, Երեւան, 1983թ.:
- ՀՊԹ. – Հայաստանի պատմութեան պետական թանգարանի դրամագիտութեան բաժին:
 - А. – А. Марнов, Инвентарный каталог мусульманских монет императорского Эрмитажа, СПб, 1896 г.
 - МИА. – Музей истории Азербайджана (г. Баку).
 - П. – Е. А. Пахомов, Монеты Азербайджана, вып. II, Баку, 1963 г.
 - В. – В. Тизенгаузен, Монеты восточного халифата, СПб, 1873 г.
 - Ф. – Р. Р. Фасмер, О монетах Саджидов, Баку, 1927 г. «Извести общества обследования и изучения Азербайджана», № 5.
 - Ш. – Р. Шерцель, Описание медалей и монет императорского Харьковского университета, Харьков, 1912 г.
 - Э. – Рукописный каталог отдела нумизматики Государственного ордена Ленина Эрмитажа (Ленинград).
 - ՅՅ. – Эпиграфина Востока, Журнал института археологии АН СССР, издательство «Наука», Ленинградское отделение.
 - AZ – Ahmed Ziya, Catalogue of Islamic coins, Constantinople, 1910.
 - BM – Stanley Lane-Poole, Catalogue of oriental coins in the British Museum, vol. I, London, 1875. The coins of Eastern Califates.

- Dorn – B. Dorn, Inventaire des monnaies des Califes orientaux, St. Pétersbourg, 1877.
 DS – D. Sear, Roman coins and their values, London, 1964.
 GE – I. Ghalib Edhem, Catalogue des monnaies des Califes (Musée Impérial Ottoman). Constantinople, 1894.
 HC – H. Cohen, Description historique des monnaies sous l'empire romain communément appelées, Paris, 1883.
 HN – H. Nützel, Katalog der orientalischen Münzen, I, Berlin, 1898.
 KL – Stanley Lane Poole, Catalogue of the Collection of Arabic coins preserved in the Khedival Library at Cairo London, 1897.
 L – H. Lavoix, Catalogue des monnaies musulmanes de la Bibliothèque Nationale, I, Paris, 1887.
 MM – Michael Mitchiner, Ancient and classical World (600 B. C. – A. D. 650), London, 1978.
 Mattingly –
 Harold Mattingly, M. A., Coinage of the Roman Empire in the British Museum, London, vol. I, 1923, vol. II, 1930, vol. III, 1936, vol. IV, 1940.
 PB – Paul Z. Bedoukian, A classification of the coins of the Artaxiad dynasty of Armenia, New York, 1968.
 S – Sydenham, M. A. The coinage of the Roman Republic, London, 1952.
 W – A Weyl, Verzeichnis der reichhaltigen Sammlung orientalischer Münzen des Fürsten G., Berlin, 1885.
 WAB – John Walker, M. A. D. A catalogue of the Arab-Byzantine and post reform Umayyad coins. British Museum, London, 1956.

Խ. Ա. ՄՈՒՇԵՂԵԱՆ



ԶՕՆ
 ՀԱՅՈՑ ՓԱՌՔԻ ՀԻՄՆԱԴԻՐ
 ԱՐՏԱՇԷՍԵԱՆ
 ԱՐՔԱՅԱՏՈՀՄԻՆ

